# Արքայադուստր ձեռնոցից



Պատրաստենք արքայադուստր ձեռնոցից։

1. Ձեռնոցի մատները ներկենք դեղին գույն։ Այն կլինի մեր թագը։



2. Ձեռնոցի ափին հակառակ կողմից, մատների վրա կարենք բազմագույն հուլունքներ, որոնք կզարդարեն թագը։



3. Բրդյա թելերից կարենք մազերը։



4. Կտորից, գունավոր թղթից, հուլունքից կամ կոճակից պատրաստենք աչքը, քիթն ու թուշիկները և ամրացնենք ձեռնոցի վրա։ Դրանք կարելի է նաև նկարել։ Ասեղնագործենք բերանը.



5. Ժանյակը կարենք ձեռնոցի ներքին հատվածին և կստանանք օձիքը։



6. Թագի տակ ժապավեն կապենք.



Ձեռնոցը հագնելուց պետք է բութ մատը սեղմել ափին, որպեսզի չերևա։ Արքայադուստրը պատրաստ է։

